ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնք
ՀՀ, Շիրակի մարզ, ք.Գյումրի, +374 312 3-2606, gyumri@gyumri.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 սեպտեմբերի 2025 թվականի N 93-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱՐՇԱԿ ԲՐՈՒՏՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԹԻՎ 4 ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՈՐՊԵՍ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանու 2017 թվականի նոյեմբերի 06–ի N 119-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 10-րդ և 11-րդ կետերի դրույթներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի «Արշակ Բրուտյանի անվան թիվ 4 երաժշտական դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) տնօրենի գրությունը՝ ողղված Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 02-ին N 12871 թվագրությամբ) և համայնքապետարանի աշխատակազմի մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լ. Թովմասյանի զեկուցագիրը՝ ողղված Գյումրի համայնքի ղեկավարին (Գյումրու համայնքապետարան մուտքագրված 2025 թվականի սեպտեմբերի 03-ին Զ/1372-2025 թվագրությամբ)՝ **Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի համայնքի ավագանին որոշում է.**

1. Կազմակերպությանը որպես նվիրատվություն հատկացնել 760 000 /յոթ հարյուր վաթսուն հազար/ Հայաստանի Հանրապետության դրամ՝ կազմակերպությանը կից գործող «Մանսուրյան աշակերտական կամերային նվագախմբի» համար թվով 4 նոր թավջութակների ձեռքբերման նպատակով:

2.Հանձնարարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական բաժնին սույն որոշման 1-ին կետում նշված ֆինանսական միջոցների հատկացումը կատարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրու համայնքի 2025 թվականի բյուջեի 8/1/1 գործառական դասակարգման (4819) «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական դասակարգման հոդվածից՝ օրենքով սահմանված կարգով:

3. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում կազմակերպության տնօրենին պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -24 **Դեմ -0** **Ձեռնպահ -0**

Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Գ. ՂՈՒԿԱՍՅԱՆ
Ն. ՄԵՍՐՈՊՅԱՆ
Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Կ. ԼԱԼԱԶԱՐՅԱՆ
Վ. ՄԿՐՏՉՅԱՆ
Լ. ԱՆԱՆՅԱՆ
Հ. ՄԱՆՈՒԿՅԱՆ
Է. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Գ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Ն. ԲԵԳԶԱԴՅԱՆ
Ա. ԲԵՅԲՈՒՏՅԱՆ
Ս. ԱԴԱՄՅԱՆ
Հ. ԳԵՎՈՐԳՅԱՆ
Լ. ԳԱՍՊԱՐՅԱՆ
Կ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վ. ԵԴԻԳԱՐՅԱՆ
Ն. ՄԻՐԶՈՅԱՆ
Ռ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ս. ՄՈՍՈՅԱՆ
Ա. ՄՈՒՐԱԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ՂՈՒԿԱՍՅԱՆ

2025թ. սեպտեմբերի 16
ք. Գյումրի